ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՆԱՆՍԵՆԸ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 1925—1929 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ֆրիտյոֆ Նանսենը, որը բացառիկ ներդաշնակությամբ զուգակցում էր մեծ գիտնականի ու հումանիստ հասարակական գործչի լավագույն հատկանիշները, Սովետական Ռուսաստանի լավագույն բարեկամներից մեկն էր։ Նա հումանիստական գործունեություն ծավալեց նաև հայ ժողովրդի համար, վիթխարի ջանքեր գործադրեց հայ գաղթականներին «Նանսենյան անձնագրերով» ապահովելու և ապա Սովետական Հայաստան տեղափոխելու գործին օգնելու ուղղությամբ։

Սփյուռքահայերի հայրենադարձությունը սկսվեց սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո և այդ մասին կրկին ազդարարեց ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը՝ Լոզանի կոնֆերանսում։ Լիովին պաշտպանելով այդ պետական քաղաքականությունը, Նանսենը՝ իր հանձնաժողովի հետ միասին, 1925 թ. հունիսին ժամանեց Հայաստան։ Անվանապես նա գործում էր որպես Ազգերի լիգայի գլխավոր կոմիսար (գաղթականական գործերի գծով) և հանդես գալիս Աշխատանքի միջազգային բյուրոյի կողմից։ Նանսենը Հայաստանում մնաց համարյա 3 շաբաթ, մոտիկից ծանոթացավ վերածնվող հայ ժողովրդի կյանքին, գննեց այն տեղանքը, ուր նախատեսվում էր նոր գաղթականներ բնակեցնել և ստացավ ՀՍՍՀ ժողկոմխորհի լիակատար աջակցությունը՝ իր մարդասիրական պլանների կենսագործման համար։ Այնուհետև Նանսենը մեկնեց Մոսկվա, ուր հանգամանորեն խոսեց Հայաստանում կատարած աշխատանքի մասին և հայտնեց իր պատրաստակամությունը՝ բարոյապես ու նյութապես աջակցելու հայ գաղթականների հայրենադարձությանը։ ՍՍՀՄ կառավարությունը գոհունակությամբ մոտեցավ այդ մարդասիրական գործին և իր կողմից հավաստի երաշխիքներ տվեց նրա իրականացման համար։

Քաջալերված սովետական կառավարության պաշտպանությամբ, Նանսենը վերադարձավ Արևմտյան Եվրոպա և լայն կամպանիա ծավալեց, պրոպագանդելով սովետական իշխանության նվաճումներն ու հայ ժողովրդի վերածնունդը և արտասահմանում գտնվող հայ գաղթականներին մայր հայրենիք վերադարձնելու անհրաժեշտությունը։ Նա հանդիպումներ ունեցավ նաև հայ գործիչների հետ՝ պատմելով իր վառ տպավորությունները Սովետական Հայաստանի մասին։ Այսպես, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուբարին նա ասաց. «Ձեր ժողովուրդը, հազիվ դուրս գալով համաշխարհային պատմության մեջ չտեսնված աղետից, ծառեր է տնկում, ջրանցքներ ու էլեկտրակայաններ կառուցում։ Ձեր ժողովուրդը՝ իր հազարամյա պատմությամբ ու մշակույթով, իր անօրինակ խիզախությամբ և անսովոր

եռանդով ու աշխատասիրությամբ կվերակենդանանա և իր երկիրը կկառուցի»[1]։

Նանսենը մեկնեց Ժնև և 1925 թ. հուլիսի 28-ին Ազգերի լիգային ներկայացրեց հատուկ զեկուցագիր՝ հայ գաղթականների տեղավորման խնդրի վերաբերյալ։ Այնտեղ խոսվում է նրա գլխավորած հանձնաժողովի կատարած աշխատանքի մասին և ընդգծվում, որ սովետական երկրում ամենուրեք ջերմությամբ են ընդունել նրան և ցուցաբերել լիակատար պատրաստակամություն՝ առաջադրված պլաններն իրագործելու համար։ Նանսենը նշում է, որ «հայ ղեկավարները... շատ են ցանկանում, որ իրենց հայրենակիցները Հայաստան վերադառնան», և ինքն էլ գտնում է, որ «հայկական հանրապետությունը... պետք է դիտել որպես գոյություն ունեցող միակ օջախը, ուր ցրված հայերը կարող են հաստատվել»[2], որ Սովետական Հայաստանի «դրությունը խաղաղ է ներսում և սահմանի վրա, ազգաբնակչությունը արդյունաբերող է և աշխատասեր, հողերն արգավանդ են, երկիրն ունի ջրային շատ ուժեր և հանքային հարստություններ։ Բայց մյուս կողմից, երկիրը մեծ չափերով ավերվել է արշավանքներից, կոտորածներից... Ներկայումս երկիրն ավելի ազգաբնակչություն ունի, քան նրա այժմյան կացությունը նրան կարող է թույլատրել։ Նա նեղվում է կապիտալի մեծ պակասից և մասնավորապես նրա բերրի հողերը չեն կարող բավարար չափով օգտագործվել առանց որոշ մասերի ոռոգման ու չորացման»[3]։

Նանսենը նշում է, որ չնայած այդ դժվարություններին, Սովետական Հայաստանը իր գոյության սկզբից ծավալել է տնտեսական ու կուլտուրական շինարարություն և ոչ միայն բարելավել շուրջ 400.000 գաղթականության վիճակը, այլև կազմակերպել հայրենադարձություն, ընդունել ու տեղավորել 14000 տարագիրների։ Այդ պրոցեսը շարունակվում է, բայց արտասահմանում գտնվող հայ գաղթականների թիվը շատ մեծ է, նրանց հայրենիք վերադառնալու ցանկությունը անսահման և անհրաժեշտ է, որ հայերին բազմիցս խոստումներ տված արևմտյան տերությունները ևս աջակցեն այդ գործին՝ գոնե փոխառություններ տրամադրելու ձևով։

Նանսենը ցույց է տալիս, որ «հայ գաղթականների պրոբլեմը վերջնականապես լուծելու համար անհրաժեշտ կլինի ոռոգման և չորացման մեծ ծրագրեր իրագործել, ինչպես նաև զարգացնել Հայաստանի արդյունաբերական հնարավորությունները»[4]։ Նա նշում է, որ հայկական կառավարությունը գործում է հենց այդ ուղղությամբ և իր հանձնաժողովին է ներկայացրել ոռոգման մի շարք նախագծեր, որոնք «բոլորն էլ իրագործելի են», բայց կոնկրետ անմիջական (առաջիկա 2—3 տարում) օգնության համար իրենք ընտրել են Երևանի արևելյան և արևմտյան Ղռերի, Սև ջրի և Զանգիբասարի հողերը՝ ընդամենը 33000 դեսյատին, ուր կարելի է տեղավորել 25000 մարդ, ընդ՝որում համաձայնություն է կայացվել առաջին հերթին բերել այն 15 հազար գաղթականներին (Հունաստանից ու Թուրքիայից), որոնք գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում։ Այդ վայրերի անջրդի հողերը ոռոգելու և ճահիճները չորաց-

---

1 Лив Нансен-Хейер, Книга об отце, Л., 1971, էջ 413:

2 Հայկ. ՍՍՀ ՀԱՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 374, թ. 66։

3 Նույն տեղում, թ. 69։

4 Նույն տեղում, թ. 70։

նելու համար պահանջվում է 6 միլիոն ռուբլի, որին պետք է գումարել ևս 3 միլիոն ռուբլի՝ 15000 գաղթականներին տեղավորելու, նրանց համար տներ կառուցելու, գործիքներ, անասուններ, սերմացու և այլն տրամադրելու համար։

Արտասահմանում միջոցներ հայթայթելու հիմնական ուղին դիտվում էր փոխառությունը. «Իմ կարծիքով,— գրել է Նանսենը,— անհրաժեշտ գումարը ձեռք բերելու լավագույն միջոցն է փոխառություն անել՝ հույն գաղթականների փոխառության նման պայմաններով», ընդ որում «հայ կառավարությունը տրամադրված է ընդունելու և երաշխավորելու 9 միլիոն ռուբլու այդ փոխառությունը, որ պիտի հատկացվի բացառապես վերև հիշված նպատակներին։ Կառավարությունը ցանկանում է, որ տոկոսը որքան կարելի է չափավոր լինի և մուծելու ժամանակամիջոցը 10 տարուց պակաս չլինի, ավելի շուտ՝ լինի 15—20 տարի»[5]։ Ապա Նանսենը թվարկում է այն արտոնությունները, որոնք սովետական կառավարությունը կտա գաղթականներին (առանց մաքսի ու ձրի տեղափոխությունը, ձրի հող ստանալը և երեք տարի հարկերից ազատվելը, մեկ-երկու տարի զինվորական ծառայությունից ազատվելը և այլն)։ Մյուս կողմից Նանսենը ցույց է տալիս, որ հողերի յուրացումը արագությամբ կհատուցի ծախսերն ու փոխառությունը։ Իր զեկուցագրի վերջում, հիշեցնելով արևմտյան տերությունների հայանպաստ խոստումները, Նանսենը հույս է հայտնում, որ նրանք կպաշտպանեն իր «առաջարկները, որոնք նպատակ ունեն գեթ մասնավոր չափով իրականացնել նրանց կողմից արտահայտված ցանկությունը... Մնում է քննել, թե ինչ միջոցներով կարելի է ստանալ այս առաջարկների իրագործման համար անհրաժեշտ փոխառությունը»[6]։

1925 թ. սեպտեմբերի 10-ին Նանսենը ժնևում իր հանձնաժողովի առաջարկների մասին զեկուցում է Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականական բաժանմունքի խորհրդակցական կոմիտեում։ Նշելով, որ Հայաստանում կատարվում են ոռոգման մեծ աշխատանքներ և հատկապես պետք է յուրացվի Սարդարապատի դաշտը, որի համար պահանջվում են մեծ ծախսեր, մինչդեռ հայ գաղթականների մի մասին պետք է շտապ տեղափոխել Հայաստան, նա ասաց, որ իր գլխավորած հանձնաժողովը վերցրել է ավելի մատչելի ծրագիր՝ 9 միլիոն ռուբլի (մոտ մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ) գումարով. «Այդ մեկ միլիոն ոսկին կարելի է փոխ տալ հայ կառավարության, որ ամեն երաշխավորություն կներկայացնեն։ Եթե Ազգերու ընկերությունը իր հովանավորության տակ առնե այս գործը, դյուրին է հրապարակի վրա գտնել այս գումարը։ Ֆինանսական և ամեն տեսակետով առողջ գործ մըն է աս, և ամեն ապահովություն կներկայացնեն բաժնետերերուն համար»[7]։ Նիստի բոլոր մասնակիցները հավանություն տվին Նանսենյան նախագծին և խոստացան աջակցել դրա իրականացմանը։

Սեպտեմբերի 12-ին Նանսենի զեկուցումը լսվում է Ազգերի լիգայի պլենար նիստում։ Նա հաղորդում է, որ իր գլխավորած հանձնաժողովի առաջին խնդիրն էր Կովկասում գտնել մի հարմար վայր, ուր կարող էին ապահով ապրել հայ փախստականները։ «Մենք,— ասաց Նանսենը,— քննեցինք բո-

5 Նույն տեղում, թ. 72։

6 Նույն տեղում, թ. 77։

7 «Ակադամ» (Փարիզ), 19. 9. 1925։

լոր հնարավորությունները և եկանք այն եզրակացության..., որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող գաղթականների մի մեծ մասը— շեշտում եմ մի մեծ մասը— կարող է տեղավորվել՝ դա Երևանի հայ հանրապետությունն է», մանավանդ որ հայ գաղթականները «ցանկանում են գնալ Հայաստան և ոչ մի ուրիշ տեղ։ Նրանք ցանկանում են գնալ և կառուցել իրենց ազգային հայրենիքը»[8]։ Նանսենը միաժամանակ ընդգծում է Սովետական Հայաստանի կառավարության հոգատար վերաբերմունքը գաղթականության տեղափոխման նկատմամբ, նշելով, որ այնտեղ մեծ աշխատանքներ են սկսված «...ոռոգման և չորացման գործի համար, որը միջոցներ պիտի ընձեռի ոչ միայն այն գաղթականների համար, որոնք արդեն Հայաստանի հողի վրա էին, այլև այն մեծ մասի համար, որը դեռևս թափառում է աշխարհի երեսին»[9]։ Նանսենը կոչ է անում աջակցել հայոց «օջախի» բարգավաճմանը. դա արդարամտության և ճշմարտացի պահանջի ակնկալություն էր, որ պատրանքային լինելով հանդերձ, խիզճ շարժելու միտում ուներ։ Նանսենը չէր ուզում հուսախաբ լինել և ձգտում էր ամեն կերպ հասնել իր նպատակին։ Նա և՛ պահանջում էր, և՛ խնդրում, դիմում բոլոր հնարավոր միջոցներին՝ միայն թե արդար գործը տեղից շարժվի։ Այս կապակցությամբ Ֆրանսիայում սովետական դեսպանության առաջին քարտուղար Ս. Փիրումյանը (Փիրումովը) դեռ 1925 թ. սեպտեմբերի 27-ին՝ Փարիզից Անդրերկոմին և ՀՍՍՀ Ժողկոմխորհին ուղարկած նամակում գրում էր. «Իր բոլոր ճառերում դ-ր Նանսենը մեծ գովասանքով էր խոսում Սովետական Հայաստանի կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի, ընդունակ և եռանդուն կառավարության, արտահայտում է իր զարմանքը նրա եռանդի ու գործնականության վրա»[10]։ Նման վերաբերմունքը միայն ուժեղացնում էր արևմտյան տերությունների կառավարողների հակակրանքը իրենց իսկ նշանակած «բարձր կոմիսարի» նկատմամբ, իսկ նա հաստատ էր իր ընտրած ուղուն և վեր էր կանգնում իմպերիալիստների նենգ հաշիվներից։

Լսելով Նանսենի զեկուցումը, Ազգերի լիգայի պլենար նիստն այն ընդունեց սոսկ ի գիտություն և սեպտեմբերի 15-ին միաձայն որոշեց գլխավոր կոմիսարի առաջարկությունը հանձնել հինգերորդ («հումանիստական») հանձնաժողովի քննությանը։ Այստեղ էլ Նանսենը հանդես եկավ իր հանձնաժողովի նախագծի հիմնավորմամբ և մեծ պետությունների կողմից փոխառություն ստանալու առաջարկով, ընդ որում այս անգամ նա խնդիր էր դնում հայերին վերադարձնել այն 5 միլիոն ֆունտ ստեռլինգը (կամ գոնե դրա մի մասը), որը Թուրքիան գրաբել էր նրանցից ու պահ տվել Բեռլինի բանկին (պատերազմից հետո այդ գումարը անցել էր դաշնակիցներին)։ Ի դեպ, նմանատիպ մի փաստի մասին Նանսենը խոսեց նաև Ազգերի լիգայի պլենար նիստում (1925 թ. սեպտեմբերի 12-ին). նա հիշեցրեց, որ արևմտյան տերությունները բռնագրավել են հայերի նաև այն ավանդները (դեպոզիտները), որոնք դրվել են եվրոպական բանկերը մինչև 1922 թ. ցարերը Զմյուռնիայում, և հայերը այժմ չեն կարողանում ետ ստանալ այդ գումարները։ Դրա դեմ հայերը արդարացիորեն բողոքում են, և Նանսենը հույս է հայտնում, որ

8 Հայկ. ՍՍՀ ՀԱՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 75։

9 Նույն տեղում, թ. 8։

10 Նույն տեղում, գ. 264, թ. 206։

դոնե դատարանով կամ մի այլ կերպ «իրավացի լուծվի այդ կարևոր հարցը»[11]։ Նանսենն այն կարծիքին էր, որ եթե այդ գումարները վերադարձվեին իրենց տերերին՝ հայ գաղթականներին, ապա նրանք կկարողանային տեղափոխվել Սովետական Հայաստան՝ առանց փոխառության կարիք զգալու։

Հինգերորդ հանձնաժողովի քննարկումն էլ հանգեցրեց այն բանին, որ որոշվեց առաջադրված հարցի մանրամասն ուսումնասիրումը հանձնարարել 9 հոգուց կազմված ենթահանձնաժողովին։ Այստեղ արդեն առավել հստակությամբ է երևում զանազան պետությունների վերաբերմունքը։ Այսպես, ենթահանձնաժողովի նախագահ, Անգլիայի պատվիրակ դքսուհի Աթթոլը նախ, վկայակոչելով Բոլդուինի ու Ասքվիթի 1924 թ. դիմումը Մակդոնալդին՝ հայկական փողերի մասին, «կժխտե իր պետին կողմեն ճանաչված հայկական իրավունքն այդ գումարի վրա, այն միամիտ պատճառով, թե պ. Պոլտուին այն ժամանակ, երբ բարձրացրեր է այդ հարցը, սոսկական անհատ էր»[12]։ Երկրորդ, նա ուղղակի «իր կառավարության անունից հայտարարեց, որ նա չի կարող փոխառություն տալ և ոչ էլ երաշխավորել այն որևէ սովետական հանրապետության համար»։ Դա ոչ թե լեդի Աթթոլի անձնական կարծիքն էր, այլ անգլիական կառավարության պաշտոնական տեսակետը, մի կառավարություն, որի ֆինանսների մինիստր Ուինստոն Չերչիլը Նանսենի նախագծի վերաբերյալ հեռագրել էր, թե «Մեծ Բրիտանիան չի կարող պաշտպանել այդ առաջարկությունը»։ Լիվ Նանսեն-Հոյերը, անդրադառնալով Չերչիլի այդ վարքագծին, գրել է. «Այդպիսով, նա սեպ խրեց ամբողջ գործի մեջ»[13]։ Ինքը՝ Նանսենը 1925 թ. սեպտեմբերի 20-ին շվեյցարական գործիչ Լ. Սուլցերին գրած նամակում նշում է, որ ժնևում «առավոտից մինչև երեկո պայքար է ու պայքար։ Ես այժմ պայքարում եմ հայերի համար փոխառություն ձեռք բերելու։ Հանդիպում եմ մեծ դիմադրության, հատկապես Անգլիայի կողմից»[14]։

Անգլիական կառավարության այս դիրքը կանխորոշեց նրա դաշնակիցների վերաբերմունքը. Ֆրանսիայի ներկայացուցիչ Պամսն ասաց, որ իր կառավարությունը կարող է փոխառության երաշխիք տալ, եթե Անգլիան էլ երաշխավորի, իտալական պատվիրակը կրկնեց նույնը։ Թեև ենթահանձնաժողովի մնացած անդամները նանսենյան նախագծին համակրանքով էին վերաբերվում, նրանց ձայները վճռական նշանակություն չունեին։ Այնուհանդերձ, Նանսենը լավատեսորեն էր տրամադրված հայ ժողովրդի ապագայի նկատմամբ։ Ժնևի լճի ափին զրուցելով հայ անվանի հասարակական գործիչ Արշակ Սաֆրաստյանի հետ, նա ասում էր. «Թվում է, արևմտյան տերությունների կառավարությունները... կմերժեն գաղթականներին օգնելը։ Երբևիցե ճակատագիրը նրանց կպատժի։ Իսկ ձեր ժողովուրդը կվերածնվի և կնվաճի իր իսկական ազգային իրավունքները։ Չկասկածեք դրանում»[15]։

Արևմտյան տերությունները, ձախողելով նանսենյան ծրագիրը, միաժամանակ տարածում էին ստահոդ լուրեր, որպեսզի իրենց մեղքերը բարդեն ուրիշների վրա և հատկապես վարկաբեկեն սովետական իշխանությունը։ Նան-

---

11 Նույն տեղում, գ. 530, թ. 6։

12 «Երևան» (Փարիզ), 4. 10. 1925։

13 Лив Нансен-Хейер, նշվ. աշխ., էջ 409։

14 Fridtjof Nansen, Brev, IV, Oslo, 1966, էջ 311—312։

15 Лив Нансен-Хейер, նշվ. աշխ., էջ 410։

սենը, ջերմորեն ընդունված սովետական ղեկավարների, այդ թվում Գ. Չիչերինի կողմից, դատապարտեց այդ թշնամական բանսարկությունները և շարունակեց իր գործը։ Նա Ալբեր Թոմայի, Դեբրուկերի (Բելգիայի ներկայացուցիչը) և Ազգերի լիգայի ֆինանսական քարտուղարության ղեկավար Արթուր Սոլտերի հետ միասին Փարիզում մասնավոր տեսակցություն է ունենում Ս. Փիրումյանի հետ, որպեսզի պարզի, թե «Հայաստանի կառավարությունը փոխառության ապահովման ինչ միջոցներ կարող է առաջարկել առանց անգլիական երաշխիքի փոխառությունը բավարար չափով իրացնելու համար»։ Ս. Փիրումյանը գրում է, որ իր զրուցակիցները հարց բարձրացրեցին, թե արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չի համաձայնի երաշխիքներ տալու մշտական պարտավորությունների ու գրավների ձևով, որին ինքը վճռականորեն բացասական պատասխան տվեց, գտնելով, որ դա «անհամատեղելի է հանրապետության արժանապատվության հետ»։ Այդ ժամանակ Ա. Թոման և Ֆ. Նանսենը ասացին, որ այնուամենայնիվ պետք է գտնել մի այնպիսի հարմար ձև, որն ապահովեր փոխառությունը և ընդունելի լիներ նաև անգլիական կառավարության համար։ Նրանք գտնում էին, որ այդպիսին կարող է լինել մի ինքնավար (ավտոնոմ) մարմնի կազմակերպումը, որը մի կողմից՝ Հայաստանի կառավարության հետ կնքած պայմանագրով կստանձներ հողերի յուրացման ու գաղթականների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ կկապվեր եվրոպական ֆինանսական շրջանների հետ փոխառություն ստանալու համար. «Իմ զրուցակիցները,— գրել է Ս. Փիրումյանը,— ըստ երևույթին, ենթադրում էին, որ այդ ավտոնոմ կազմակերպությունը կարող է ստանալ այն երաշխիքը, որպիսին Անգլիան չհամաձայնվեց տալ անմիջապես Հայկական կառավարության փոխառությանը, այսինքն, ինչպես ասում էր Նանսենը, դա կլիներ մարդասիրական բնույթի յուրահատուկ կոնցեսիա, որը կքողարկեր Հայկական կառավարությանը տրվող փոխառությունը»[16]։ Նրանք խիստ մտահոգված էին տվյալ դեպքում հարցի զոնե կոմպրոմիսային մի լուծում գտնելու համար, որպեսզի ժամանակ շահեին՝ սպասելով բարենպաստ իրադրության, այլապես «անգլիական դիմադրությունը կարող էր բոլորովին խեղդել գործը»։

1925 թ. սեպտեմբերի 23-ին կայացավ ենթահանձնաժողովի վերջին նիստը, որը որոշում ընդունեց վերոհիշյալ առաջարկի ոգով. նախատեսվեց, որ Ազգերի լիգայի Խորհուրդը կնշանակի 5 կոմիսարներ, որոնք բանակցությունների մեջ կմտնեն թե՛ հայկական կառավարության և թե՛ մյուս պետությունների հետ, կմշակվի ավտոնոմ կազմակերպության ստատուտը, որը նրան կոնցեսիա կնքելու և փոխառություն բաց թողնելու լիազորություններ կտա։

Դրանից հետո հարցը նորից տեղափոխվում է Ազգերի լիգայի հինգերորդ հանձնաժողով, որի սեպտեմբերի 26-ի նիստում տեղի է ունենում մի նոր մանրամասն քննարկում։ Զեկուցում է Դեբրուկերը, որը հավանություն է տալիս Նանսենյան նախագծին և բազմակողմանիորեն հիմնավորում նրա իրականացման հնարավորությունն ու անհրաժեշտությունը։ Նա հիշեցնում է դաշնակիցների բազմաթիվ խոստումները հայերին և շեշտում, որ Սովետական Հայաստանին փոխառություն տրամադրելը ոչ միայն մարդասիրական գործ է, այլև «պատվի խնդիր», ընդ որում այդ փոխառությունը լրիվ կերաշ-

16 Հայկ. ՍՍՀ ՀԱՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 264, թ. 206։

խավորվի ինչպես Հայաստանի կառավարության, այնպես էլ սովետական միութենական բանկի կողմից։ Նա նշում է, որ Սովետական Հայաստանում արդեն կատարվել են հողերի յուրացման մեծ աշխատանքներ, որոնք տվել են իրենց լավագույն արդյունքները։ Ուրեմն պետք է համարձակորեն առաջ տանել «Նանսենի կողմից այնքան հիանալիորեն սկսած գործը», իսկ եթե Ազգերի լիգան այդ գործի նկատմամբ մնա «անտարբեր ու թշնամի», ապա դա «Լիգայի համար կլինի սև օր»[17]։

Դարձյալ լավատեսությամբ էր համակված Նանսենի ճառը։ Նա նշում է, որ բարի ցանկության դեպքում կարելի է առաջարկված «սխեման» կատարել և անօթևան հայ գաղթականներին տեղավորել իրենց փափագած հայրենիքում. «Երևանի հանրապետությունը միակ հողամասն է,— ասում է նա,— ուր մենք կարող կլիննենք ազգային օջախ կառուցել հայ ժողովրդի համար։ Դա կլինի իսկական հայկական օջախ»։ Անդրադառնալով կազմված նախագծին, Նանսենը ասում է. «Ես հաստատապես համոզված եմ, որ այս սխեման գլուխ կգա և որ դա մեծ հաջողություն կլինի։ Դա լինելու է, բայց անհրաժեշտ է, որ Լիգան իր մեծ աջակցությունը հանդես բերի»[18]։

Հունաստանի պատվիրակ Պապան լիովին համամիտ էր զեկուցողին և իր կառավարության աջակցությունը խոստացավ հայ գաղթականների տեղափոխման գործին։ Բարյացակամությամբ է խոսում Ավստրալիայի պատգամավոր տիկին Մակկինոնին, որը գրվատում է Նանսենի սկսած գործը և գրտնում, որ պետք է անպայմանորեն օգնել «նավաբեկության ենթարկված ժողովրդի բեկորներին», նրանց փոխադրելով Սովետական Հայաստան։

Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի ներկայացուցիչները բավարարվում են ընդհանուր հայտարարություններ անելով և հայերի նկատմամբ կարեկցանքի խոսքեր ասելով, ընդ որում դքսուհի Աթթոլը ասում է, որ գերադասելի է հայ գաղթականներին տեղավորել Հարավային Ամերիկայի երկրներում, ուր, նրա կարծիքով, Ազգերի լիգան պետք է իր գործակալները նշանակի։ Արտառոց էր Հոլանդիայի պատվիրակ Ֆրանսուայի ելույթը. նա նշեց, որ թե՛ Նանսենի նախագիծը և թե՛ Դեբրուկերի ճառը «քաղաքական բնույթ ունեն, ուստի և պետք է քննարկվեն վեցերորդ՝ Քաղաքական հանձնաժողովում, որի պատճառով էլ Հոլանդիան ձեռնպահ է մնում քվեարկությունից»[19]։

Չնայած այդ ամենին, Հինգերորդ հանձնաժողովը բանաձև է ընդունում, որով ընդհանուր առմամբ հավանություն է տրվում Նանսենյան առաջարկին և որոշվում է կազմել 5 հոգուց բաղկացած հանձնախումբ՝ Նանսենյան նախագծի տեխնիկական կողմը նորից ուսումնասիրելու և փոխառության հարցով Սովետական Հայաստանի ու եվրոպական պետությունների կառավարությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հետ բանակցելու համար։ Ըստ էության դեռևս ոչինչ չխոստացող այդ որոշումն առաջ է բերում վտարանդի սպիտակգվարդիականների և սովետական երկրի այլ թշնամիների կատաղությունը։ Օրինակ, կադետ Աստրովը շանթ ու որոտ էր թափում և նշում, որ հանձնաժողովի բանաձևը հանդիսանում է «փոխառության միջազգային հանձնարարական Սովետներին»։

---

17 Նույն տեղում, գ. 530, թ. 45։

18 Նույն տեղում, թ. 46, 48։

19 Նույն տեղում, թ. 55։

Ս. Փիրումյանը, ամփոփելով հայ գաղթականության հարցի շուրջ ծավալված երկարատև քննարկումները, արդարացիորեն գրել է. «Բոլոր խորհրդակցությունները, վիճաբանություններն ու ճառերը՝ կապված այդ հարցի հետ, օբյեկտիվորեն մեծ դեր խաղացին Սովետական հանրապետությունների կյանքի բոլոր բնագավառներում կայունության, կազմակերպվածության ու վիթխարի նվաճումների, ինչպես նաև մեր ազգային ծրագրի գրական պրոպագանդման գործում»։

Ի հակադրություն թշնամական ամբաստանությունների, Նանսենը հետևողականորեն շարունակում էր իր գիծը, ընդ որում սերտ կապեր հաստատելով սովետական ներկայացուցչության հետ։

Նա կատարում է ամեն ինչ, որպեսզի ձեռնարկվելիք միջոցառումները համաձայնեցվեն սովետական կառավարության հետ։ Մասնավորապես նա, ժնևից Նորվեգիա վերադառնալիս, Բեռլինում հանդիպում է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին և հաղորդում, որ Ազգերի լիգայի Խորհուրդն ու Ընդհանուր ժողովը միաձայն հավանություն են տվել Հայաստանին փոխառություն տալու իր առաջարկին։ Նախատեսվում է, որ ոռոգման աշխատանքները կկատարի կա՛մ հայկական կառավարությունը և կա՛մ դա կտրամադրվի կոնցեսիայով. «Իրենն՝ Նանսենին երկրորդը դուր չի գալիս»,— գրել է Գ. Չիչերինը 1925 թ. հոկտեմբերի 2-ին Բեռլինից ՍՍՀՄ Ժողկոմսովետին և Արտաքին գործերի ժողկոմատին ուղարկած նամակում։ Այդտեղ էլ նշվում է, որ փոխառություն ստանալու համար «անհրաժեշտ է տերությունների երաշխիք։ Ֆրանսիան համաձայն է, բայց ոչ առանց Անգլիայի, իսկ Անգլիան այժմ մերժում է, բայց կարող է դեռ վերամտածել։ Առանց այդպիսի երաշխիքի փոխառությունը շատ թանկ կնստի, բանկիրներն այնպես կքերթեն, որ ոչինչ անել հնարավոր չի լինի»[20]։ Նանսենը խնդրում է, որ Մոսկվան և Երևանն արագությամբ պատրաստեն իրենց կոնկրետ պլանները, որովհետև հավանաբար հոկտեմբերի 19-ին Փարիզում կհրավիրվի նախապատրաստական կոմիտեի (5 հոգուց կազմված հանձնաժողովի) առաջին նիստը, իսկ դեկտեմբերին նյութերը պետք է ներկայացվեն Ազգերի լիգայի Խորհրդին։

Ստանալով Գ. Չիչերինի նամակը, նրա տեղակալ Մ. Լիտվինովը հոկտեմբերի 3-ին նամակ է գրում Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին ու Ժողկոմսովետին, որպեսզի Նանսենի համար որքան կարելի է արագ պատրաստեն համապատասխան նյութեր՝ գաղթականների վերաբնակեցման և ոռոգման աշխատանքների վերաբերյալ[21]։ Հայաստանի կառավարությունը նախապատրաստում է անհրաժեշտ նյութերը և Անդրերկրոմի հավանությամբ իր ներկայացուցիչ նշանակում Ս. Փիրումյանին, որի մասին Ժողկոմսովետի նախագահ Ս. Համբարձումյանը հեռագրում է Նանսենին[22]։ Միաժամանակ Անդրերկրոմի նախագահ Գ. Կ. Ծրջոնիկիձեն հեռագրում է Փարիզ՝ Ս. Փիրումյանին, որպեսզի նա Հայաստանի Ժողկոմսովետի անունից պաշտոնական բանակցություններ վարի Նանսենյան կոմիտեի հետ, ընդ որում «մերժի կոնցեսիան, ընդունի փոխառությունը Հայաստանի կառավարությանը, եթե պայմանները բարենպաստ

20 Նույն տեղում, գ. 264, թ. 203։
21 Նույն տեղում, գ. 292, թ. 41։
22 Նույն տեղում, թ. 47։

են, և փոխառության համար միութենական կառավարության պարտադիր թույլտվությամբ»[23]։

Ստանալով անհրաժեշտ լիազորություններ, Ս. Փիրումյանն ավելի է ակտիվացնում իր գործունեությունը։ 1925 թ. հոկտեմբերի 30-ին նրա մասնակցությամբ բացվում է Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովի նիստը, որին ներկա էին նրա անդամներ Ֆ. Նանսենը, Ժ. Պամսը, Մ. Մակդոնալդը, Ս. Պետրելին, Կ. Բերկմանը, ինչպես նաև Ա. Թոման, Ա. Սոլտերին և ուրիշներ։

Նախագահող Պամսը ճառ է արտասանում, որի հիմնական նպատակն էր պարզել, թե փոխառության համար Հայաստանի կառավարությունը ինչ ռեալ երաշխիքներ կարող է տալ։ Նա անձամբ այն կարծիքին էր, որ նախ՝ Հայաստանին տրամադրվելիք միջոցները պետք է գտնվեն հենց հանձնաժողովի կամ Ազգերի լիգայի որևէ այլ օրգանի ձեռքերում ու հսկողության տակ, և երկրորդ՝ Հայաստանում ոռոգման ենթակա հողը պետք է դառնա գրավ (կոնցեսիա), ինչպես նաև տրվեն ուրիշ հատուկ երաշխիքներ։ Այնուհետև ձայնը տրվում է Ս. Փիրումյանին, որը հայտարարում է, թե Հայաստանի կառավարությունը Նանսենի նախագիծը դիտում է որպես մարդասիրական գործ և կարող է ընդունել միայն նորմալ փոխառություն, այն էլ արտոնյալ պայմաններով։ Ինչ մնում է հողը գրավ դնելուն կամ կոնցեսիային, ապա դրանց մասին խոսք անգամ չի կարող լինել։ Փիրումյանը շեշտում է, որ «Հայաստանի ու Միության ֆինանսական հզորության պատկերի առաջ ծիծաղելի է խոսել ինչ-որ երաշխիքների մասին»[24]։

Հանձնաժողովն իր նիստերում լսեց նաև արտասահմանում գտնվող Հայկական բարեգործական ընկերությունների պատվիրակությանը, որը նորից պատրաստակամություն հայտնեց հնարավորին չափ օժանդակել հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու գործին[25]։

1925 թ. նոյեմբերի 2-ին Ս. Փիրումյանը հանձնաժողովի աշխատանքների մասին զեկուցագիր է ուղարկում ՌԿ(բ)Կ Անդրերկրամին և Հայաստանի Ժողկոմխորհին։ Այնտեղ նա նշում է, թե ինչպես հանձնաժողովը սովետական արդարամիտ գծի ճնշման տակ նահանջ է կատարել իր նախկին դիրքերից (իրային գրավներ, հատուկ երաշխիքներ և միջազգային ֆինանսական վերահսկողություն) և ներկայացրել նոր առաջարկներ, որոնք թեև դարձյալ «անընդունելի են մեզ համար», բայց վկայում են նրա զիջողականության միտումի մասին. «Հաշվի առնելով այդ, ես կարծում եմ, որ կարելի է հասնել հետագա զիջումների»[26]։ Ս. Փիրումյանը խնդրում է տեղում քննարկել այդ հարցը և արդյունքի մասին իրազեկ պահել իրեն, տալով որոշակի հրահանգներ։ Նա հատկապես ընդգծում է Նանսենի դերը, այն, որ նա «անպայմանորեն ու ամենավերջին լավ է տրամադրված մեր նկատմամբ» և որ «մենք հնարավորին չափ պետք է աջակցենք Նանսենին, հանձնաժողովում թեթևացնենք նրա աշխատանքը»[27]։

Ցուցաբերելով միանգամայն բարյացակամ վերաբերմունք, սովետական կառավարությունն ընդառաջում է հանձնաժողովի որոշմանն ու Նանսենի խրն-

23 Նույն տեղում, թ. 46։
24 Նույն տեղում, թ. 44։
25 Նույն տեղում, գ. 264, թ. 162։
26 Նույն տեղում, գ. 296, թ. 56։
27 Նույն տեղում, թ. 55։

դիրքին։ 1925 թ. նոյեմբերի վերջերին Երևան են ժամանում հանձնաժողովի երկու ներկայացուցիչները, որոնք մի քանի ամիս մնում են Հայաստանում, բանակցություններ են վարում կառավարության հետ և ստանում «տվյալներ Հայաստանի արդյունաբերության, ֆինանսների, ջրային տնտեսության, առողջապահության և արդարադատության մասին»[28]։ Նրանք հավաստիանում են, որ Սովետական Հայաստանի կառավարությունը պատրաստ է ընդունելու օրինական փոխառություն՝ առանց նրա սուվերենության որևէ խախտման և որ երկիրը լիովին ի վիճակի է մարելու այն։ «Պրավդան» դեռ 1925 թ. դեկտեմբերի 11-ին հաղորդագրություն է տպում Հայաստանում տեղի ունեցած այդ բանակցությունների մասին, ուր բերված է ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Երզնկյանի հետևյալ հայտարարությունը. «Այժմ Նանսենը արտասահմանում եռանդուն կամպանիա է մղում Սովետական Հայաստանին տրամադրելու 9 միլիոն ռուբլու փոխառություն, որը նախատեսված է արտասահմանում ցրված հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու ու տեղավորելու համար...։ Ժնևում փոխառության հարցը քննարկվել է Ազգերի լիգայի հանձնաժողովի կողմից։ Հայաստանի կառավարությունը... հայտնել է, որ Հայաստանը փոխառության մասին պայմանագիր կկնքի սովետական կառավարության անունից միայն այն պայմանով, եթե չնսեմացվի Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության արժանապատվությունը»։ Միաժամանակ Միութենական կառավարության անունից հանձնաժողովի ներկայացուցիչներին հայտնվում է, որ ենթադրվող փոխառության դիմաց կտրվի սովետական Պետբանկի երաշխիքը. «Գաղթականների տեղավորման համար ՀՍՍՀ կառավարության կողմից միջազգային փոխառություն կնքելու դեպքում ՍՍՀՄ Պետական բանկը (Պետբանկը) իր վրա է վերցնում այդ փոխառության (տոկոսների ու մարման) լիակատար սպասարկումն ու երաշխիքը»[29]։

Այդպիսով, սովետական օրգաններն անում են ամեն ինչ, որպեսզի Նանսենի միսիան հաջողությամբ պսակվի։ 1926 թ. սկզբին «Պրավդայի» և Անդրբկովկասի մամուլի աշխատակիցների հետ ունեցած զրույցում Ս. Տեր-Գաբրիելյանը (ԱՍՍՀՄ-ի լիազոր-ներկայացուցիչը Մոսկվայում) նշել է, որ սովետական կառավարությունը մի կողմից՝ շարունակում է սեփական միջոցներով հայ գաղթականների հայրենադարձությունը, մեծացնում ոռոգման սիստեմի ընդլայնման համար կատարվող ծախսերը (այդ նպատակի համար ընթացիկ տարում միութենական կառավարությունը Հայաստանին բաց է թողնում 1600000 ռուբլի), իսկ մյուս կողմից՝ աջակցում Նանսենի մարդասիրական գործի իրականացմանը։ Ս. Տեր-Գաբրիելյանը շեշտում է, որ ակտիվորեն է գործում նաև ինքը՝ Նանսենը, որին «մենք, իհարկե, շնորհակալ ենք»[30]։ Նորից անդրադառնալով այդ հարցին, նա մի այլ առիթով ասել է. «Ես ոչ մի րոպե չեմ կասկածել, որ Սովետական Միության փորձված բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը և նրա մերձավորագույն աշխատակիցները, որոնք եղել են Հայաստանում և մինչև այժմ գտնվում են այնտեղ, իրենց կողմից բոլոր ջանքերը

28 Նույն տեղում, գ. 604, թ. 4։

29 Նույն տեղում, գ. 238, թ. 265։

30 «Правда», 22. I. 1926.

կթափեն հոգուտ արտասահմանում գտնվող հայ աշխատավոր գաղթականական մասսաների շահերի»[31]։

Ստացված զեկուցագրի հիման վրա Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովը կատարում է նոր քննարկումներ։ 1926 թ. մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում այդ հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին Ժ. Պամսը (նախագահ), Ֆ. Նանսենը, Մ. Մակդոնալդը, մեկական ներկայացուցիչներ Իտալիայից ու Գերմանիայից, Ազգերի լիգայի մի քանի տեխնիկական աշխատակիցներ, հանձնաժողովի՝ Հայաստանից վերադարձած ներկայացուցիչը։ Նիստին հրավիրված էր և մասնակցեց նաև Ս. Փիրումյանը։

Նախագահող Պամսը հանդես եկավ հաղորդումով և նշեց, որ ստացվել է հանձնաժողովի կողմից Հայաստան ուղարկված էքսպերտների զեկուցագիրը։ Այն «լիովին հաստատում է Նանսենյան նախագծերի իրագործման տեխնիկական հնարավորությունը», նախագծեր, որոնց համաձայն կարելի է ոռոգել 37450 դեսյատին լավագույն հողեր։ Դրանց յուրացման բոլոր աշխատանքների, ինչպես նաև այնտեղ հայ գաղթականներ փոխադրելու, առաջին շրջանում նրանց նյութապես ապահովելու համար պահանջվում է «ընդամենը 15 միլիոն ռուբլի, այսինքն՝ 5 միլիոնով ավելի նախնական ենթադրածից»[32]։ Այդ գումարը պետք է ձեռք բերվի փոխառությամբ, որը կարող էր տալ Ազգերի լիգայի մեջ մտնող որևէ տերություն։ Սակայն, ինչպես նկատում է Պամսը, դա չի ստացվում, քանի որ Անգլիան հրաժարվեց և նրան հետևեցին Ֆրանսիան ու մյուս պետությունները. «Այժմ,— ասաց Պամսը,— Հանձնաժողովը հնարավոր է գտնում այդ փոխառության երաշխավորություն ստանալ Ազգերի լիգայից առանց արևմտյան տերությունների երաշխիքի ու այնպիսի պայմաններով, որոնք բոլորովին չեն խախտում Սովետական Հայկական Հանրապետության սուվերենիտետը»[33]։ Ս. Փիրումյանն այդ հաղորդագրությունն ընդունեց գոհունակությամբ և խնդրեց Պամսին հայտարարությունը իրեն հանձնել գրավոր ձևով, որը և կատարվեց։

Ս. Փիրումյանը 1926 թ. մարտի 29-ին զեկուցագիր ուղարկեց Հայաստանի ԺողԿոմխորհին և այն եզրափակեց հետևյալ խոսքերով. «Հանձնաժողովի վերջին առաջարկությունը քայլ է դեպ առաջ՝ մինչ այդ մեզ արած առաջարկությունների համեմատությամբ, քանի որ լիովին հանված է իրային գրավների և հանրապետության սուվերենության հետ անհամատեղելի երաշխիքների հարցը։ Ինչքանով ես տպավորություն ստացա առանձին զրույցներից, հանձնաժողովը կրավարարվի Պետբանկի առևտրական երաշխիքներով և փոխառության ընդհանուր ապրոբացիայով միութենական կառավարության կողմից»[34]։

Իրականում այդպես չստացվեց։ Արևմտյան տերությունների անմիջական թելադրանքով Ազգերի լիգայի՝ հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովը, Պամսի նախագահությամբ, փոխառություն տալու համար նոր պահանջներ է ներկայացնում։ Մասնավորապես, նա դեռ 1926 թ. մարտի 26-ին

31 «Правда», 19. II. 1926.

32 Հայկ. ՍՍՀ ՀԱՍՇ ԳԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296, թ. 45։

33 Նույն տեղում, թ. 46։

34 Նույն տեղում։

հուշագիր է ուղարկում Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանությանը և նշում, որ Նանսենյան ծրագիրը, թեև տեխնիկապես հիմնավորված է ու իրագործելի, բայց նրա «գործադրության ելևմտական պայմաններուն մասին հանձնաժողովս դժբախտաբար ի վիճակի չէ դրական հանձնարարություններ ներկայացնելու։ Խորհրդային Պետական դրամատան երաշխավորությունը միայն բավարար չերևի հարկավոր փոխառությունը ձեռք բերելու համար։ Արդարև, ի նկատի եղած փոխառություններ տալու տրամադիր դրամատերերը պիտի ուզեին ստանալ ապահովություններ, որոնք երաշխավորեին տոկոսներու տարեվճարը և դրամագլխին հատուցումը տարվե տարին։ Եթե այս երաշխավորությունը չապահովվի կառավարություններու կողմեն այն երկրներուն, որոնք կշահագրգռվին Հայկական խնդրով, Հայաստան ինքը կամ Խորհրդային Միությունը պետք է տան այդ ապահովությունները»[35]։

Այդպիսով, հանձնաժողովը չի բավարարվում սովետական Պետական բանկի պաշտոնական երաշխավորությամբ և պահանջում է լրացուցիչ պարտավորություններ։ Դրան Փարիզում սովետական դեսպանությունից ապրիլի 26-ին պատասխանում են, որ ՍՍՀՄ կառավարությունը համաձայն է Նանսենյան ծրագրին և «իր հավանությունը կտա այս նպատակով հրապարակ հանվելիք փոխառության մը և կերաշխավորե անոր գլխավճարին և տարեկան տոկոսներուն վճարումը Խորհրդային Հանրապետություններու Միության կառավարության Պետական դրամատան կողմե։ Փոխառության մանրամասնությունները, անոր գլխավճարին և տոկոսներուն վճարումը և այլ պայմանները շահակից կողմերու համաձայնությամբ պիտի որոշվին»[36]։

Չնայած այսպիսի հստակ ու պաշտոնական բավարար պատասխանին, Պամսը շարունակում է պնդել իր առաջարկը և այդ մասին ապրիլի 27-ին իրազեկ է պահում սովետական դեսպանությանը, հատկապես շեշտելով այն մոմենտը, որ իրենք ցանկանում են գիտենալ, «թե տոկոսներու և դրամագլխին տարեվճարը երաշխավորել հանձն առնող հաստատությունը փոխատու երկրներու մեջ ի՞նչ ունի համապատասխան իր հանձնառություններուն»։ Դա նշանակում էր ոչ միայն չհավատալ սովետական պաշտոնական հավաստիացումներին, այլև փորձել միջամտել նրա ներքին գործերին։ Փարիզում սովետական դեսպանը հարկադրված է լինում մայիսի 11-ին կրկնել իր պատասխանը՝ ավելացնելով. «Սույն տարեվճարներու համար (տոկոսի և գլխավճարի) հարկ եղած գումարները պիտի արձանագրվին Խորհ. Հայաստանի Հանրապետական բյուջեի մեջ և այսպես պիտի գտնվին նաև Խորհր. Միության պետական բյուջեի մեջ»։

Թվում է, ամեն ինչ պարզ էր ու զոհացուցիչ։ Բայց ոչ, այդպես չէին մտածում արևմտյան իմպերիալիստներն ու նրանց գործակատարները։ Պամսի հանձնաժողովին պատրվակ էր պետք՝ ձախողելու փոխառությունը և այդ պատրվակը հնարեցին, հայտարարելով, որ սովետական կառավարության առաջարկած երաշխիքները բավարար չեն։ Դրանից հետո հանձնաժողովը իր ֆունկցիան սպառված համարեց։

---

35 «Ապագա», 19. 6. 1926։

36 «Ապագա», 26. 6. 1926։

Հասկանալի է, որ այդ խաղի ետևում թաքնված էին իմպերիալիստների քաղաքական նկատառումներն ու տնտեսական շահերը։ Նրանք լցված էին հակասովետական թույնով և չէին ուզում փոխառություն տրամադրել, այն էլ բարենպաստ պայմաններով։ Պատահական չէ, որ այդ ժամանակ նրանք հայտարարեցին, որ իրենք 12 տոկոսից ցածր փոխառություն չեն տրամադրի։ Այդպես էր սովետական երկրի վերաբերմամբ, մինչդեռ կապիտալիստական պետությունները համաձայնության էին գալիս ավելի ցածր (նույնիսկ 1—2) տոկոսներով։ ՍՍՀՄ Կենտգործկոմի անդամ Ս. Տեր-Գաբրիելյանը 1926 թ. մայիսի 31-ին Մոսկվայում, ընդունելով հայ հասարակական գործիչ Ա. Սաֆրաստյանին, ասաց, որ այդ «վաշխառուական սակը» ունի քաղաքական աստառ և որ «միջազգային փոխառության մեջ ցարդ չտեսնված այդքան բարձր տոկոսի մը պահանջը լոկ պատրվակ մըն է գործը վիժեցնելու»[37]։

Հայ գաղթականության տեղավորման հարցը շուտով նորից է քննարկվում Ազգերի լիգայի Խորհրդում։ Այնտեղ ընդունված բանաձևով «Խորհուրդը հավանություն է տալիս Նանսենյան նախագծին և այն հանձնում ֆինանսական կոմիտեին»[38]։ Ազգերի լիգայի ֆինանսական կոմիտեն կարծես թե «բազմակողմանիորեն ուսումնասիրում է» հարցը և նույնիսկ «ընդունում նախագծի իրագործման կարևորությունը», նրա տեխնիկական հիմնավորվածությունը, բայց «ափսոսում է», որ ֆինանսական տեսակետից «ներկա պայմաններում նախագիծը չի կարող իրականացվել»։ Ֆինանսական կոմիտեի բանաձևը բավականին ընդարձակ է, որտեղ ոչ միայն իր, այլև Ազգերի լիգայի Խորհրդի անունից շեշտվում է, որ նրանք իրենց վրա «չեն վերցնում ոչ մի օրինական կամ բարոյական պատասխանատվություն փոխառության ապահովման համար, հաշվի առնելով բաղաքական պայմանները (ընդգծումը մերն է— Մ. Ա.), որոնցից որոշակիորեն պետք է կախված լինի նաև այդ ապահովման արժեքը»[39]։ Ահա թե որն է «գաղտնիքը»— բաղաքական պայմանները, որոնցից ելնելով ո՛չ արևմտյան տերությունները և ո՛չ էլ նրանց կամակատար Ազգերի լիգան չեն ուզում երաշխավորել Սովետական Հայաստանին (միևնույն է թե Սովետական Միությանը) փոխառություն տալու համար։ Պատահական չէ, որ դաշնակցության շեֆ Ալ. Խատիսյանը գերագույն հրամանքով է արձանագրել Ազգերի լիգայի ֆինանսական հանձնաժողովի նախագահի զրույցն իր հետ, երբ նա ուղղակի ասել է. «Եթե Հայաստանի մեջ իշխանության գլուխ կեցած բլլար ոչ խորհրդային իշխանությունը, պահանջված գումարը կհայթայթվեր մեկ օրվա մեջ...»[40]։ Նշենք, որ արևմտյան իմպերիալիզմի թևերի տակ ծվարած դաշնակցությունն իր հերթին ամեն կերպ խոչընդոտում էր Նանսենյան պլանի իրականացմանը։

Տեսնելով, որ Ազգերի լիգան լքում ու փաստորեն վիժեցնում է հայ գաղթականությունը Հայաստանում տեղավորելու գործը, մինչդեռ Սովետական Հայաստանի կառավարությունը պատրաստակամություն է հայտնում իր միջոցներով յուրացնելու նախատեսված հողերը, Նանսենը շատ ջանքեր գործա-

---

37 «Ապագա», 12. 6. 1926։

38 Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296. թ. 118։

39 Նույն տեղում, գ. 456, թ. 49։

40 Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը. Բեյրութ, 1958, էջ 415։

դրեց՝ զանազան աղբյուրներից հավաքելու գոնե 3 միլիոն ռուբլի, որպեսզի որևէ չափով նպաստած լինի իր նպատակի իրականացմանը։ Մասնավորապես նրա գլխավորությամբ 1926 թ. ստեղծվում է Միացյալ հայկական կոմիտե, որի մեջ մտան հայ ժողովրդի բարեկամներ տարբեր երկրներից (Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա և այլն), ինչպես նաև Կարմիր խաչի ու այլ կազմակերպություններից[41]։ Այդ ճանապարհով, այսինքն՝ բացառապես հասարակական մարդասիրական օգնությամբ հաջողվում է հայթայթել որոշ միջոցներ հայ գաղթականներին օգնելու համար։

Միաժամանակ Նանսենը 1927 թ. Ազգերի լիգայից պահանջում է վերջ տալ ստեղծված քաշքշուկին, հայ գաղթականության հարցի շուրջը սարքած նենգամիտ խաղին. քանի որ արևմտյան տերությունները չեն ուզում կատարել իրենց խոստումները և ոչ մի աջակցություն ցույց չեն տալիս հայ գաղթականներին, Ազգերի լիգան բարոյական իրավունք չունի զբաղվելու այդ հարցով, իսկ ինքն էլ հրաժարվում է գլխավոր կոմիսարի պաշտոնից, գտնելով, որ այլ ձևով կօգնի հայ ժողովրդին։ Նանսենի այդ համարձակ քայլը շփոթություն է առաջ բերում Ազգերի լիգայի ղեկավար շրջաններում և, մերկացումից խուսափելու համար, նրանք գերադասում են «նահանջել» ու նորից խոստանալ, որ մի բան կանեն, միայն թե նա չհրաժարվի իր պարտականություններից։ Պրոֆեսոր Յակ. Ս. Վորմ-Մյուլլերը (Նորվեգիայի ներկայացուցիչը Ազգերի լիգայում), այդ ժամանակ հանդիպելով Նանսենին, իր օրագրում նշել է. «Տանջված, ալեհեր, կնճռոտած դեմքով, այնպես անվերջ հոգնած, վշտահար հայացքով, բայց և այնպես ուղիղ ու բարեկազմ, առաջվա նման վճռական ու եռանդուն, քանզի նա գիտի, որ կանգնած է ճիշտ ճանապարհի վրա և բարին կհաղթի դաժանությանը»[42]։ Նանսենը խիստ վրդովված էր Ազգերի լիգայում տոն տվողների խարդավանքներից։ Նա ունեցավ հոգեկան ծանր ապրումներ և նույնիսկ կարծես մի պահ փորձեց թողնել իր սկսած արդար, հումանիստական գործը, բայց չկարողացավ և չէր կարող։ Չէ որ այն բխում էր նրա բուն էությունից, որից հրաժարվել չէր կարող։ Հայ գաղթականների հայրենադարձությունը դարձել էր նրա սեփական գործը, և «նա չկարողացավ հրաժարվել իր աշխատանքից»[43]։

1927 թ. հունիսի 16-ին տեղի ունեցավ Ազգերի լիգայի Խորհրդի նիստը, ուր Նանսենը ցույց տվեց, թե ինչպես «քաղաքական պատճառներով» ձախողվեց Հայաստանին տրամադրվելիք փոխառության գործը։ Ապարդյուն անցան նաև «ձեռնարկները Ամերիկայի Միացյալ Նահանգների մեջ և այլուր մասնավոր աղբյուրներե գրամ գտնելու համար»։ Նանսենը նշեց, որ իրեն հայտնի է, թե ինչպես Սովետական Հայաստանի կառավարությունը, առանց դրսի օգնության, ձեռնամուխ է եղել նախատեսված հողերի յուրացմանը և պատրաստ է նոր գաղթականներ ընդունելու։ Վերջիններիս տեղավորելու համար պահանջվում է 300000 անգլիական ֆունտ։ Նանսենը հավաստիացնում է, որ այդ գումարի մեկ երրորդը կհոգան գաղութահայերը, բայց անհրաժեշտ է, որ

---

41 Տե՛ս Лив Нансен-Хейер, նշվ. աշխ., էջ 411։

42 Նույն տեղում, էջ 412։

43 Fridtjof Nansen. Explorer-Scientist-Humanitarien, Oslo, 1961, էջ 84։

գոնե մնացածը (երկու երրորդը) տան մեծ պետությունները կամ Ազգերի լիգան։ Դեսպերի ականատես Լ. Բաշալյանն այդ առթիվ գրել է. «Դր. Նանսեն այդ կոչը ուղղեց շատ հուզիչ կերպով։ Հիշեցուց հայկական ողբերգությունը, դաշնակիցներուն տված հանդիսավոր խոստումները և եզրակացուց՝ ասելով, որ Ազգերու ընկերության արժանապատվությունը կպահանջե, որ գոնե այս եղանակով օգնություն ընձեռե հայ գաղթականներուն։ Շատ ազդու վերջաբանով մը դր. Նանսեն ըսավ, թե այս հուսահատական կոչը ուղղելուն նպատակն այն է, որ կուզե փարատել Ազգերու ընկերության ցույց տված անգործության դեշ տպավորությունը»[44]։

Նանսենը 1927 թ. սեպտեմբերի 26-ին նորից է հուզիչ ճառ ասում Ազգերի լիգայում, դիմում նրա 54 անդամ-պետություններին՝ գոնե նվազագույն օգնություն ցույց տալու հայ գաղթականներին։ Սակայն մեծ տերությունները դարձյալ մերժում են։ Այդ առթիվ Լիվ Նանսեն-Հոյերը գրել է. «Գերմանական կառավարությունը, իր վրա չվերցնելով և ոչ մի պարտականություն, առաջարկեց 50 հազար ֆունտ գումար, Հունաստանի, Լյուքսեմբուրգի ու Նորվեգիայի կառավարությունները նույնպես խոստացան ոչ մեծ օգնություն։ Բայց մեծ տերությունները առաջվա նման դեմ էին այդ առաջարկին և, այդպիսով, ամբողջ մտահղացումը փլվեց։ Այդ դեպքում ինչի՞ համար էին բոլոր հանձնաժողովները, վրդովված ասում էր Նանսենը։ Ի՞նչ հարկ կար ստեղծել դրանք, եթե կառավարությունները բոլորովին էլ մտադիր չէին բան անելու և եթե նույնիսկ ամենափոքր պահանջները շատ մեծ էին թվում նրանց համար»[45]։

Ինչպիսին արևմտյան իմպերիալիստական տերություններն էին, այնպիսին էլ նրանց կամակատար Ազգերի լիգան էր։ Վերջինիս նկատմամբ Նանսենը, ելնելով իր մարդասիրական ու խաղաղասիրական նպատակներից, ըսկզբից տածում էր համակրանք ու բարի հույսեր, բայց այժմ, հատկապես հայ գաղթականության հարցի դառն պատմությունից հետո նա համոզվեց, որ փաստորեն դրանք պատրանքներ են։ Պատահական չէ, որ Նանսենը հայ ժողովրդին նվիրած իր գիրքն ավարտում է այսպիսի խոսքերով. «Վա՜յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական քաղաքականության մեջ։ Նրա համար ավելի լավ կլիներ, եթե նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շուրթերին չլիներ։ Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց...»[46]։

Նանսենի համար հայ գաղթականության հարցը դարձավ մի վճռական փորձաքար՝ ստուգելու Ազգերի լիգայի ու արևմտյան տերությունների «մարդասիրությունը»։ Նա համոզվեց, որ այդպիսին նրանք չունեն և առկա է կատարյալ խզում նրանց խոսքի ու գործի միջև։ Խորտակվեց նրա հավատն Ազգերի լիգայի նկատմամբ, մեծացավ ատելությունը արևմտյան տերությունների նենգամիտ պլանների դեմ։ Բայց Նանսենը չկտրեց իր հույսը՝ օգնություն կազմակերպելու հայ գաղթականներին։ Նա զգում էր, որ եթե իր միսիային չեն աջակցում իմպերիալիստական կառավարությունները, ապա իրեն կհասկանան ու կօգնեն ժողովուրդները։ Այդպես էր նաև Պովոլժյեի քաղցած-

---

44 Հայկ. ՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 38։

45 Лив Нансен-Хейер, նշվ. աշխ., էջ 410։

46 Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928, էջ 334։

ներին օգնելու ժամանակ, երբ Նանսենը իմպերիալիստական կառավարությունների գլխի վրայով դիմեց արևմտյան երկրների ժողովուրդներին և հասավ որոշակի դրական արդյունքների։ Դրանով իսկ Նանսենը օբյեկտիվորեն յուրահատուկ մարտահրավեր էր նետում իմպերիալիստական կառավարողներին։

Հուսախաբ լինելով Ազգերի լիգայից ու մեծ տերություններից, Նանսենը 1927—1929 թթ. տարբեր երկրներում անց է կացնում մասնավոր հանդանակություններ՝ հօգուտ հայ գաղթականների, հանդես է գալիս բազմաթիվ դասախոսություններով Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքներում և հավաքված դումարով կազմակերպում 7 հազար հոգու հայրենադարձություն. «Վաթսունվեց տարեկան մարդը երկար ճանապարհորդություն է կատարում ամերիկյան քաղաքներով, որպեսզի իր դասախոսություններով միջոցներ հայթայթի օթևանից և սննդից զուրկ գաղթականների համար»[47]։ 1929 թ. սեպտեմբերին Նանսենը Ազգերի լիգայի ասամբլեային առաջարկեց՝ վերջ տալ հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու հարցի ապարդյուն քննարկմանը։ Դրանով իսկ նա ֆորմալ կերպով ու փաստորեն խզեց իր կապը Ազգերի լիգայի հետ՝ հայկական հարցում։ Սակայն դրա լուծմամբ նա համակված էր մինչև իր կյանքի վերջը։

Հիրավի, Նանսենի գործունեության համար «ամենածանր ժամը» դարձավ այն, որ չնայած գործադրված ջանքերին, չիրականացան նրա իղձերը հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու իր պլանների վերաբերյալ։ Ֆրանսիական գործիչ Ռ. Ռիստելուեբերը գրել է. «Այս աշխարհից հեռանալիս Նանսենի ամենամեծ վիշտն այն էր, որ առաջին անգամ նրան չհաջողվեց հասնել իր առջև դրված նպատակին»[48]։ Դրա հանցավորներն իմպերիալիստական տերություններն էին, արևմտյան կառավարողները, որոնք, ինչպես ամենուրեք, այնպես էլ Ազգերի լիգայում, բոլոր խնդիրների լուծման չափանիշ էին դարձնում միայն իրենց մերկ շահը։ Գերմանական հայտնի գրող Էմիլ Լյուդվիգը, մասնավորապես անդրադառնալով հայ գաղթականների տեղավորման խնդրի քննարկման ելևէջներին, նշել է, որ Նանսենը, որպես «ժողովուրդների բարեկամ, շատ խորթ էր Ազգերի լիգայի ոգուն»[49]։ Նույն հարցի առթիվ ժամանակակից գրող Վ. Զոննտագը, արտահայտվելով ավելի պարզ, ուղղակի գրում է, թե՝ բուրժուական պետությունները չուզեցին «ոչ մի փոխառություն տրամադրել» Հայաստանին, որովհետև դա «սովետական հանրապետություն է»։ Մերկացնելով այդ պետությունների դիվանագիտական պրիոմները, նա ընդգծում է. «Մի՞թե նույնքան զայրացուցիչ չէ «կուլտուրական տերությունների» սպանիչ պասսիվությունը, որքան Թուրքերի կատարած արյունախում նողկալիությունը»[50]։

Չնայած անասելի դժվարություններին, Նանսենն անձամբ խիզախեց և կատարեց առավելագույնը, ինչ ի վիճակի էր հայ գաղթականներին օգնելու համար։

---

[47] А. Таланов, Нансен, М., 1960, էջ 288։

[48] Rene Ristelhueber, La double aventure de Fridtjof Nansen (Explorateur et philanthrope), Montreal, 1944, էջ 250։

[49] Emil Ludwig, Führer Europas, Amsterdam, 1934, էջ 41—42։

[50] Wolfgang Sonntag, Fridtjof Nansen, Weimar, 1957, էջ 17։

НАНСЕН И ВОПРОС АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В 1925—1929 ГОДАХ

Доктор историч. наук М. В. АРЗУМАНЯН

(Резюме)

Фритьоф Нансен — выдающийся полярный исследователь и ученый, общественный деятель и гуманист. Его многогранная деятельность снискала ему всемирное признание и заслуженную славу.

Великий норвежец был истинным другом Советской России. Он с глубокой симпатией относился также к армянскому народу. Особенно велики его заслуги в деле защиты армянских беженцев, их репатриации в Советскую Армению. Нансен разоблачал козни и коварные планы западных держав, лишь спекулировавших на Армянском вопросе, и одновременно развернул большую работу для облегчения положения армянских беженцев за рубежом.